# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Լոկատոր ՓԲԸ-ն ՀՀԳՄՎՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/111 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Լոկատոր ՇԿՀ | Լոկատոր | Լոկատոր ՇԿՀ | «Լոկատոր» ՓԲԸ | Շչակի կառավարման թվային համակարգ «ՇԿՀ ԼՈԿԱՏՈՐ» Հիմնական ֆունկցիոնալ պահանջներ՝ Ազդանշանի հեռահար ակտիվացում և ապաակտիվացում հետևյալ կապի տեսակներով՝ 1. GSM կապի միջոցով՝ զանգով և SMS հաղորդագրությամբ: Համացանցի միջոցով՝ լարային՝ Ethernet և անլար՝ GPRS (VPN ցանցում աշխատելու հնարավորություն ստատիկ IP-ով): Ազդարարման հնարավորություն՝ առանց որևէ կապի միջոց օգտագործելու՝ անմիջապես բլոկի վրա կամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | առանձին տեղադրված կոճակով: Կոճակը սեղմելով ազդարարումը պետք է կատարվի է ավտոմատ կերպով: Կուտակիչային մարտկոց՝ ցանցի խափանման դեպքում սարքի հետ կապ պահպանելու համար: Կարգավորման հնարավորություն՝ համակարգչի օգնությամբ: Շչակի ակտիվացման և ապաակտիվացման վերաբերյալ տեղեկատվության պահպանման և հաղորդման հնարավորություն: ՇԿՆ-ը պետք է ապահովի համայնքում առկա և գործող «C-40, C–40c, C-28, C3O-2» և այլ համարժեք մոդելների շչակների կառավարումը: ՇԿՀ-ի վիճակի վերաբերյալ տեղեկատվության դիտարկման հնարավորություն (ֆազերի կորստի, լարման, փոխատեղման և մարտկոցի լարման): Շչակի գործարկման վիճակի՝ միացված կամ անջատված լինելու վերաբերյալ տեղեկատվության դիտարկման հնարավորություն (ուշադրություն բոլորին, օդային տագնապ ազդանշանի կամ ազդարարման անջատման վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | այլ նմանատիպ ազդանշանների մասին)։ ՇԿՀ-ն պետք է ապահովի եռաֆազ և միաֆազ շչակների կառավարման հնարավորություն։ ՇԿՀ-ի ծրագրային թարմացումների հնարավորություն։ GSM ալեհավաք՝ անլար կապի որակի ապահովման համար։ ՇԿՀ-ն պետք է ունենա առնվազն 2 տեսակի ազդարարման հնարավորություն (առանց վերածրագրավորման/վերակարգավորման)՝ Օդային տագնապ (ընդհատումներով ազդանշան), Ուշադրություն բոլորին (չընդհատվող ազդանշան), ինչպես նաև հետագայում ազդարարման հրամանների տեսակների ավելացման և փոփոխման հնարավորություն Տեխնիկական պահանջներ Հիմնական տպասալ։ Ավտոմատ անջատիչ՝ առնվազն C 40A (380 և 220 Վ լարմամբ աշխատելու հնարավորությամբ)։ Մեխանիկական կոնտակտոր 18-22 Ա։ Անխափան սնուցման բլոկ (հոսանքի լարման կարգավորիչ)։ Կուտակչային մարտկոց 12 Վ, 1.2 Ա*ժ։ GSM ալեհավաք (լարի երկարությունը մինչև 500 սմ)։ ՇԿՀ-նպետք է ունենա 380 և 220 Վ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | լարմամբ աշխատելու հնարավորություն: ՇԿՀ-ի չափսերը, քաշը և այլ պահանջներ Բարձրություն` մինչև -100 սմ: Լայնություն` մինչև -50 սմ: Խորություն` մինչև -40 սմ: Քաշ` մինչև -15 կգ: Նյութ` մետաղական Ներկ` փոշեներկված կամ ներկված: Պաշտպանվածությունը` IP 65: Մատակարարը պետք է մատակարարի էլ.մալուխ, 2x2.5 ՇՎՎՊ ՎԱԳ, մոտավորապես 350 ԳՄ, ինչպես նաև շչակների մոնտաժի համար անհրաժեշտ պարագաներ (համաձայնեցնել պատվիրատուի հետ): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ЛОКАТОР закрытое акционерное общество в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԳՄՎՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/111 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |